Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ

Կ-945-15.10.2024-ՏՀ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 416-րդ հոդվածի 2-րդ մասում «բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասում նշված դեպքի» բառերը փոխարինել «բացառությամբ սույն հոդվածի 4-րդ, 6-րդ և 7-րդ մասերում նշված դեպքերի» բառերով»:

Հոդված 2. Օրենսգրքի 416-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 6-րդ և 7-րդ մասերով.

«6. Հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնի վրա սխալ ԱՏԳ ԱԱ ծածկագիր կամ աշխատանքի կամ ծառայության սխալ կոդ տպագրելն այն դեպքում, երբ պահպանված են հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառության համար սահմանված մյուս բոլոր կանոնները, կիրառվում է նախազգուշացում:

7. Սույն հոդվածի 6-րդ մասում նշված խախտումը թեմատիկ հարկային ստուգման ակտով արձանագրելուն հաջորդող մեկ տարվա ընթացքում կրկին կատարելու դեպքում հարկ վճարողից գանձվում է տուգանք՝ 50 հազար դրամի չափով: Սույն մասի կիրառության իմաստով՝ խախտումը կրկին կատարել է համարվում թեմատիկ հարկային ստուգման ակտի ամսաթվից հետո՝ մեկ տարվա ընթացքում, մինչև հաջորդ թեմատիկ հարկային ստուգման ակտի նախագծի ամսաթիվը, սույն հոդվածի՝ 6-րդ մասով սահմանված խախտումը կատարելը:»

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2025 թվականի մարտի 3-ից:

ՏԵՂԵԿԱՆՔ
Փոփոխվող հոդվածների վերաբերյալ

~~առաջին~~ երկրորդ ընթերցում

Կ-945-15.10.2024-ՏՀ-011/01

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 416-րդ հոդվածի 2-րդ մասում «բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասում նշված դեպքի» բառերը փոխարինել «բացառությամբ սույն հոդվածի 4-րդ, 6-րդ և 7-րդ մասերում նշված դեպքերի» բառերով»:

Հոդված 2. Օրենսգրքի 416-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 6-րդ և 7-րդ մասերով.

«6. Հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնի վրա սխալ ԱՏԳ ԱԱ ծածկագիր ~~ապրանքային դիրք~~ կամ աշխատանքի կամ ծառայության սխալ կոդ տպագրելն այն դեպքում, երբ պահպանված են հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառության համար սահմանված մյուս բոլոր կանոնները, կիրառվում է նախազգուշացում:

7. Սույն հոդվածի 6-րդ մասում նշված խախտումը թեմատիկ հարկային ստուգման ակտով արձանագրելուն հաջորդող մեկ տարվա ընթացքում կրկին կատարելու դեպքում հարկ վճարողից գանձվում է տուգանք՝ 50 հազար դրամի չափով: Սույն մասի կիրառության իմաստով՝ խախտումը կրկին կատարել է համարվում թեմատիկ հարկային ստուգման ակտի ամսաթվից հետո՝ մեկ տարվա ընթացքում, մինչև հաջորդ թեմատիկ հարկային ստուգման ակտի նախագծի ամսաթիվը, սույն հոդվածի՝ 6-րդ մասով սահմանված խախտումը կատարելը:»

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2025 թվականի ~~հունվարի 1-ից~~ մարտի 3-ից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-945-15.10.2024-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	**ՀՀ կառավարություն**	**Հոդված 2.**	Առաջարկում ենք նախագծի 2-րդ հոդվածով նախատեսվող Օրենսգրքի 416-րդ հոդվածում լրացվող նոր 6-րդ մասում «ապրանքային դիրք» բառերը փոխարինել «ԱՏԳ ԱԱ ծածկագիր» բառերով: Առաջարկությունը պայմանավորված է ս.թ. սեպտեմբերի 9-ին ԱԺ կողմից 2-րդ ընթերցմամբ ընդունված «ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» /***Կ-908-03.09.2024-ՏՀ-011/2ամբ/*** ՀՀ օրենքում կատարված փոփոխությամբ, որի 5-րդ հոդվածով ամրագրվել է Օրենսգրքի 416-րդ հոդվածի 4-րդ	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			մասում «ապրանքային դիրքի» բառերը փոխարինել «ԱՏԳ ԱԱ ծածկագրի» բառերով:		
2.	**ՀՀ կառավարություն**	**Հոդված 3.**	Նախագծի 3-րդ հոդվածով օրենքն **ուժի մեջ մտնելու ժամկետն** առաջարկում ենք վերանայել՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի պահանջները: Ըստ այդմ Նախագծի 3-րդ հոդվածում «հունվարի 1-ից» բառերը փոխարինել «մարտի 3-ից» բառերով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է: